# «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

<u>**ՆԱԽԱԳԻԾ**</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ` Օրենք) 24-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Միաժամանակ մեկից ավելի երեխայի ծնվելու դեպքում նոր ծնված յուրաքանչյուր երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է նոր ծնված յուրաքանչյուր երեխայի հնարավոր բոլոր կարգաթվերի համար սահմանված չափերի հանրագումարի չափով։»:

**Հոդված 2.** Օրենքի 26-րդ հոդվածում.

1. 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ընտանեկան դրամագլուխը, մինչև երեխայի (որի անվամբ բացված է պետական աջակցության հաշիվը, այսուհետ՝ հաշվետեր) 18 տարին լրանալը, բացառապես Կառավարության սահմանած պայմաններով և կարգով անկանխիկ վճարումներ կատարելու նպատակով, տնօրինում է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով հաշվառված.

- ծնողը, ում նշանակվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստը,
- մյուս ծնողը (բացառությամբ այն դեպքի, երբ նա զրկվել է ծնողական իրավունքներից, կամ սահմանափակվել են նրա ծնողական իրավունքները), եթե դադարել է ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող ծնողի՝ ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունքը և առկա չեն սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետում նշված հանգամանքները։»,

2. 4-րդ մասում.

- «Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ օրինական ներկայացուցչի (ծնողի, խնամակալի, որդեգրողի)» բառերը փոխարինել «Ծնողի» բառով.
- 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) դադարել է ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող

անձի խնամակալությունը հաշվետիրոջ նկատմամբ (ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձը ազատվել է խնամակալի պարտականությունների կատարումից) կամ վերացվել է հաշվետիրոջ որդեգրումը (եթե անձը ձեռք է բերել ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք որպես որդեգրող), կամ».

- 5-րդ կետում «հաշվետիրոջ հետ Հայաստանի Հանրապետությունում նույն բնակության վայրում բնակվող (հաշվառված)» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով հաշվառված» բառերով,
- Լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող ծնողը հաշվառվել է օտարերկրյա պետությունում բնակության վայրի հասցեով կամ դուրս է եկել Հայաստանի Հանրապետության բնակության վայրի (հասցեի) հաշվառումից և մեկամսյա ժամկետում չի հաշվառվել:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: